

Համերգ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան

by Y.A.
DRUM SCHOOL
YAMAHA

Երեխաների պաշտպանության միջազգային օրը Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում նշանավորվեց գեղեցիկ համերգով, որը նախաձեռնել և կազմակերպել էր Վրաստանի հայ երաժիշտների միությունը: Միջոցառմանը մասնակցում էին

1 / 3

ին
Թբիլիսիի
Ա
.
Շանիձեի
անվան

№20 մշակույթի դպրոցի երաժշտական հարվածային գործիքների երիտասարդական «Drum School» համույթը և Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի «Ներսես Շնորհալիի» անվան պատանեկան համույթը:

Բացելով միջոցառումը , «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լևոն Չիդիլյանը շնորհավորեց բոլոր մասնակիցներին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, մաղթելով նրանց խաղաղ երկնակամար և երջանիկ մանկություն:

Այնուհետև Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտեմ Կիրակոզովը ներկայացրեց Թբիլիսիի Ա. Շանիձեի անվան №20 Մշակույթի դպրոցի (տնօրեն Ալլա Լափերաշվիլի), հարվածային գործիքների «Drum School» համույթի ղեկավարներ՝ Թբիլիսիի Վ.Սարաջիշվիլու անվան կոնսերվատորիայի դասախոս Կոնստանտին Վարդանովին և նրա որդի, կոնսերվատորիայի շրջանավարտ, Թբիլիսիի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի թատրոնի մենակատար Գիորգի Վարդանովին:

Այս համույթի անդամներ Աննա Ալավիձեն, Ռավիլ Ալազովը, Նիկա Գոբեջիշվիլին, Աննա և Ռատի Չեբիցաշվիլիները, Թաթա Իրիցյանը, Նատալյա Մախսուրաձեն, Դավիթ Լութիձեն, Զուրաբ Մախարաձեն, Ալեքսանդրե Թոլորաիան փողի, շեփորի, ֆլեյտայի և հարվածային տարբեր նվագարանների վրա հայ, վրացի և արտասահմանցի այլ երգահանների ստեղծագործությունների հիանալի կատարումներով արժանացան հանդիսատեսի բուռն ծափողջույններին: Ուրախալի էր, որ նրանց կատարումներին, որ հնչում էին դաշնակահարուհի Դոդո Բադալաշվիլու նվագակցությամբ, միացավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Ներսես Շնորհալիի անվան պատանեկան համույթը (խմբավար Մարա Աբուլյան) դասական, հոգևոր և էստրադային երգերի կատարումներով, ստեղծելով գեղագիտական հիանալի տպավորություն:

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանն իր օրհնությունը բաշխելով ներկա գտնվողներին, գոհունակության խոսքեր ուղղեց երկու համույթների անդամներին հիասքանչ ելույթի համար, արժևորելով համույթների ղեկավար

մանկավարժներ Գիորգի Վարդանովի և Մարա Աբուլյանի մեծ ներդրումը նվագարանների վրա և երգերի հոգեբուխ կատարումների համար: Հոգևոր Հայրը հույս հայտնեց, որ այս համատեղ համերգը կդառնա այն գեղեցիկ նորի սկիզբը, որը պետք է շարունակվի երկու խոստումնալից համույթների՝ հարվածային գործիքների «Drum School» և Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Ներսես Շնորհալի պատանեկան համույթի համագործակցությամբ: Նա երեխաների պաշտպանության օրվա կապակցությամբ սրբապատկերներ բաժանեց հյուրընկալվող համույթի անդամներին և նրանց ղեկավարներին:

Փայլուն կատարումներով և մանկական ոգեշունչ տրամադրությամբ կայացած համերգն ավարտվեց ուրախ հյուրասիրությամբ: